

**ՃԱՀՈՒԿ-ՎԱՅՔԻ ՄԻՋԲԱՐԲԱՌԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ**

Մեր ուսումնասիրություններում Վայոց ձորի միջբարբառ ենք անվանել Վայոց ձորի և հյուսիսային Նախիջևանի տասնյակից ավելի տեղաբնիկ բնակավայրերի (Վայոց ձորի Արենի, Աղավնաձոր, Արփի, Գնդեվազ, Գնիշիկ, Խաչիկ, Կեչուտ, Հորս, Զիվա, Ռինդ, Վերին Ագնաբերդ և Նախիջևանի Ագնաբերդ և Օծոփ գյուղեր)՝ լեզվական սերտ առնչություն ներկայացնող խոսվածքները¹, որոնք դասական բարբառագիտական աշխատանքներում համարվել են Արարատյան բարբառի խոսվածքներ՝ չնայած Հրաչյա Աճառյանը չի ընդգրկել ո՛չ Արարատյան, ո՛չ Արցախ-Սյունիքի, ո՛չ էլ որևէ այլ բարբառի տարածման սահմաններում²: Ուստի, միայն առանձին աշխատանքով ուսումնասիրությունը կարող էր վեր հանել խոսվածքում առկա բարբառային յուրօրինակ իրողությունները և ճշտել նրա դիրքը մերձակա բարբառների նկատմամբ:

Հայ բարբառների ուսումնասիրման բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման սկզբունքների կիրառմամբ պարզել ենք, որ Վայոց ձորի միջբարբառը միջակա դիրք է գրավում հայ բարբառների արևելյան խմբակցության հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան և Ջուղայի բարբառների միջև, հատկանիշներով փոքր-ինչ հեռացած է Արցախ-Սյունիքի (Ղարաբաղի) բարբառից: Այնուամենայնիվ, ելնելով բարբառի տարածման հիմնական սահմաններից, այն անվանել ենք Վայոց ձորի միջբարբառ:

Այսօրվա վիճակով Վայոց ձորի միջբարբառը ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի վերոհիշյալ տասը գյուղերը, մասնակիորեն՝ նաև նույն մարզի Ջերմուկ քաղաքը և Եղեգիս գյուղը, այսինքն՝ մարզի բնակչության մոտ 20 տոկոսը: Բնակչության մնացած 80 տոկոսը հիմնականում խոսում է Խոյ-Սալմաստի խոսվածքներով:

Մինչև 1988 թվականը միջբարբառի տարածման սահմաններում էր նաև Նախիջևանի միակ խոշոր հայաբնակ բնակավայրը՝ պատմական Նախճավան

¹ Ա. Վարդանյան, *Վայոց ձորի միջբարբառը*, Ե., 2004:

² Հ. Աճառեան, *Հայ բարբառագիտություն*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Բ, Մոսկուա-Նոր Նախիջևան, 1911, էջ 37, 61-62:

գավառի Ագնաբերդ գյուղը, իսկ 1970-ականներին՝ նաև պատմական Ճահուկ գավառի Օծոփ գյուղը:

Ըստ ձևաբանական դասակարգման՝ միջբարբառը պատկանում է հայ բարբառների արևելյան խմբակցության «ուսմ» ճյուղին, ըստ հնչյունաբանական դասակարգման՝ ունի հպական բաղաձայնների երկաստիճան ձայնեղագուրկ համակարգ: Հնչյունական, քերականական, բառապաշարային և բառակազմական մի շարք առանձնահատկություններով հանդերձ՝ Վայոց ձորի խոսվածքն ընդհանուր գծեր է դրսևորում հարևան Արարատյան, Արցախ-Սյունիքի, Վասպուրականի բարբառների հետ:

Խոսվածքի և մերձակա բարբառների միջև աշխարհագրական և լեզվական մերձավորությունների համընկնման փաստը հաստատում է խոսվածքի տեղաբնիկ լինելու իրողությունը: Դա են հաստատում նաև Վայոց ձորի և հարակից տարածքների միջնադարյան վիմագիր արձանագրություններում³ և ձեռագրերի հիշատակարաններում⁴ արտացոլված բարբառային խոսքի որոշ հատկանիշներ: 14-15-րդ դարերի այդ հիշատակություններում բազմաթիվ բառեր ու բառակապակցություններ ակնհայտ աղերսներ ունեն ներկա խոսվածքի համապատասխան բառերի ու բառակապակցությունների հետ.

<i>Հիշատակություն</i>	<i>Խոսվածք</i>
Ձեռս թիլացաւ	Ծեռս թիլացալ
Շնհաւոր	Շընհավօր
Մէր չունի, Ա. քոյր ունի, էն էլ մեռաւ	Մէր չունիմ, մին ք'իր ունիմ, էն էլ մեռաւ
Մին կով տուի	Մին կօվ տըվիմ
Գրում ի, մուկն ցեթեց	Կրըմ իմ, մուգը ցեթեց
Շապտէնն մէկ օր Ծակքարովն ջուր տու	Շապտէնը մին օր Ծակքարովը ճուր տըվիմ
Անծին յերինջ մորթեցի	Անծին հերինջ մօռ ⁵ թ(եց)իմ
Մատս մանկաղով կտրել ի, հէնչանք կարացի գրել	Մաղըս մանգ'եղօվ կըղրել իմ, ընչանք կարացիմ կըրեմ

³ Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 145, 167: Կ. Մաթևոսյան, *Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները*, Ե., 2017, էջ 114:

⁴ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1973, էջ 39-40:

Թէ չէ՝ նա վայ տուր	Թէ չէ՝ նա վայ տուր
Անձեռանալի	Անձեռանալի

Խոսվածքի տեղաբնիկությունն է հաստատում նաև այն կրող բնակավայրերի անունների հնավանդության փաստը: Օրինակ՝ 13-րդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» հայտնի աշխատության մեջ և եկեղեցու հարկացուցակներում առկա են **Գնշին** (Գնիշիկ), **Հորք** (Հորս), **Արենի** (Արենի), **Առփա** (Արփա), **Կեչուտ** (Կեչուտ), **Ըռեղի** (Ըռինդ), **Գնդեվանք** (Գնդեվագ), **Ածափ** (Օծոփ), **Չուվա**, **Չիվա** (Չիվա)⁵ բնակավայրերը:

Վայոց ձորի միջնադարյան որոշ հատուկ անուններ, ի հաստատումն վերոհիշյալի, նույնպես խոսվածքի կնիքն են կրում: Որոշ հիշատակություններում, օրինակ, Բուրթեր անձնանունն ունի **Բուրթել** բարբառային ձևը (բարբառում՝ **Պուրթել**)⁶, Օրբելը՝ **Ուրթել**⁷, Արատեսը՝ **Արադես**⁸, Թանատի վանքը՝ **Թանադա վանք**⁹, Հրաշքաբերդը՝ **Հրշկաբերդ**¹⁰, ակնհայտորեն խոսվածքին հարազատ են նաև տեղանունների **Աջառագավիթ**, **Աղնջոց բերդ**, **Ըռեղի**, **Ըրվենք**, **Փշոնք**¹¹, **Աջողք**¹² և այլ ձևերը:

Ինչպես նկատվեց, հիշատակություններում առկա են միջբարբառին բնորոշ հնչյունական և ձևաբանական հատկանիշներ արտացոլող բազմաթիվ օրինակներ՝ բառասկզբում ձայնեղի խլացում (ձեռք > **ծեռ**), **ոյ** երկբարբառի պարզեցում՝ **ոյ** > **ի** (թոյլ > **թիլ**), **այ** երկբարբառի պարզեցում՝ **այ** > **է** (մայր > **մէր**, ցայտել > **ցէթիլ**), բառամիջում և բառավերջում խուլի ձայնեղացում (Արատես > **Արադես**, Թանատ > **Թանադ**), բարբառային որոշ հնագույն տարբերակներում բառասկզբի **ե** հնչյունի դիմաց **ա**-ի առկայություն (եղիճ > **ադինջ**), **ր**, **ռ** թրթռուն ձայնորդներից առաջ **օ** > **ու** հնչյունափոխություն (Օրբել > **Ուրթել**), բայի անցյալ անկատար ժամանակի օժանդակ բայի պարզեցում (գրում էի > **գրում ի** (կըրըմ ի(մ), ել լծորդության բայի անցյալ կատարյալի ոչ ցոյական կազմություն (տվեցի > **տուի** (տըվի(մ) և այլն:

Արդեն նշվեց, որ Վայոց ձորի միջբարբառը անցյալում տարածված է եղել նաև Նախիջևանի տարածքում. տարածք, որը ընդգրկելով պատմական Հայաստանի

⁵ Ս. Օրբելյան, *Սյունիքի պատմություն*, Երևան, 1986, էջ 290, 382, 383, 395-396:

⁶ Ղ. Ալիշան, նշված աշխատանքը, էջ 96:

⁷ Նույն տեղում, էջ 97:

⁸ Նույն տեղում, էջ 143, 144:

⁹ Նույն տեղում, էջ 119:

¹⁰ Կ. Մաթևոսյան, նշված աշխատանքը, էջ 94:

¹¹ Ս. Օրբելյան, նշված աշխատանքը, էջ 395-396:

¹² Ղ. Ալիշան, նշված աշխատանքը, էջ 97:

Վասպուրական աշխարհի Գողթն և Նախճավան, Այրարատ աշխարհի՝ Շարուր, Սյունիք աշխարհի՝ Ճահուկ և Երնջակ գավառները, լինելով տարբեր ազգագրական շրջանների խաչմերուկ, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, օժտված է եղել բարբառային խիստ բազմազանությամբ:

1605 թվականին Շահ Աբբասի կազմակերպած բռնագաղթի հետևանքով գրեթե ամայանալուց, մի քանի տասնամյակ անց հայերի կողմից աստիճանաբար վերաբնակեցվելուց, ապա 1828 թվականին Արևելյան Հայաստանի կազմում Ռուսաստանին միանալուց հետո հայերի թիվը գերակշիռ դառնալուց հետո՝ 1918 թվականի վիճակով Նախիջևանի հայ բնակչության մեծ մասը խոսում էր 1828 թվականից տարածքում հաստատված վերաբնակների՝ Խոյի և Մարաղայի բարբառներով: Ըստ որում, Խոյի բարբառով խոսում էր 33 բնակավայր, իսկ Մարաղայի բարբառով՝ 3 բնակավայր: Չնայած Նախիջևանի բնակչությանը վիճակված բազմաթիվ զանգվածային տեղաշարժերին՝ տարածքում, այնուամենայնիվ, պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ. Ագուլիսի բարբառով խոսում էր 7 բնակավայր, Ջուղայի բարբառով՝ 1 բնակավայր, Արարատյան բարբառով՝ 4 բնակավայր, Արցախ-Սյունիքի բարբառով՝ 7 բնակավայր, Հյուսիսային Գողթնի միջբարբառով՝ 6 բնակավայր, Ճահուկ-Վայքի միջբարբառով՝ վերոհիշյալ 2 բնակավայրերը: Բնակչության ներքին տեղաշարժերի հետևանքով առաջացել էին նաև միջխոսվածքներ՝ Ջուլֆայի (Ջուղայի և Խոյի), Որդուարի (Ագուլիսի և Խոյի)¹³:

Նախքան շահաբբասյան բռնագաղթը Արարատյան բարբառը, անշուշտ, տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել, ըստ երևույթին՝ ընդգրկել է Արարատյան դաշտը և Շարուրի դաշտը՝ ընդհուպ մինչև Արաքսի հովտում տեղադրված Նախիջևան քաղաքը և շրջակա Այլապատ, Աստապատ, Կարմիր վանք գյուղերը, ներառյալ Արաքսի հաղիպակաց՝ իրանյան ափում գտնվող Դարաշամբ գյուղը: Ի դեպ, Նախիջևանի տարածքին սահմանակից Արարատի մարզում նույնպես պահպանվել են տեղաբնիկ՝ Արարատյան բարբառի խոսվածքների կոյակներ (Արարատ, Այգավան գյուղեր)¹⁴:

Վայոց ձորի միջբարբառը նույնպես շահաբբասյան բռնագաղթից առաջ տարածման առավել ընդգրկուն սահմաններ է ունեցել, որի ապացույցներից են Երևանի մերձակայքում գտնվող **Չուլմակչի** գյուղում 1679 թվականի երկրաշարժից

¹³ Ա. Վարդանեան, *Նախիջևանի բարբառային քարտեզը*, Հանդես ամսօրեայ, հ. 1-12, 2000, Վիեննա, էջ 457-470:

¹⁴ Հ. Խաչատրյան, *Արարատի մարզի Արարատ գյուղի խոսվածքը՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրի (ձեռագիր)*, տետր հ. 197, 1983թ.:

հետո Ճահուկ գավառի Նորս գյուղից վերաբնակված և բնակավայրը **Նորք** վերանվանած¹⁵ հայերի խոսվածքի՝ հնչյունաբանական, բառապաշարային և ձևաբանական հատկանիշների բազմաթիվ ընդհանրությունները Հյուսիսային Նախիջևանի և Ճահուկ գավառի տեղաբնիկ խոսվածքների հետ¹⁶:

Նախիջևանի **Նորս** գյուղը պատմական սկզբնաղբյուրներում նույնանում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Ճահուկ գավառի **Նորագյուղ** բնակավայրի հետ¹⁷: Գյուղն աշխարհագրորեն տեղադրված է ներկայիս Նախիջևանի ինքնավար հանրապետության հյուսիսային՝ Շահբուզի (Շահապունիք) շրջանի տարածքում (աղբրեջաներեն՝ Nurs, Nursu): Բնականունը ակնհայտորեն հայերեն **նոր** բառի հոգնակի հայցականն է (նորք-**նորս**):

Նախիջևանի Նորս գյուղը 1604 թվականի շահաբասյան բռնագաղթի հետևանքով հայաթափվել է, իսկ նրա բնակիչների մի մասը, հավանաբար մի քանի տասնամյակ ապրելով Պարսկաստանում, հետագայում տեղափոխվել է Չոլմակչի: Միայն 1828 թվականին հաջորդող տարիներին Նորսը կրկին սկսել է հայաբնակ դառնալ՝ Թուրքմենչայի պայմանագրի ստորագրումից հետո այնտեղ են տեղափոխվել Խոյ-Սալմաստից գաղթած հայեր, և մինչև Աղբրեջանի կողմից իրականացված վերջնական հայաթափումը (անցյալ դարի 70-ական թվականները) գյուղը խոսում էր Խոյի բարբառով:

Նորսի հին խոսվածքի մասին պատկերացում կազմելու համար համեմատել ենք աշխարհագրորեն մոտավորապես նույն հորիզոնականի վրա տեղադրված՝ մերձակա տեղաբնիկ գյուղերի՝ Ճահուկ-Շահապունիք գավառի **Մեծուփ** (Օծուփ, աղբրեջաներեն՝ Badamlı) և Նախճավան գավառի հյուսիսային **Ազնաբերդ** (աղբրեջաներեն՝ Əznəbyurd, Calxanqala) գյուղերի խոսվածքները Նորքի խոսվածքի հետ:

Նորքի խոսվածքին անդրադարձել են նաև Վիկտոր Կատվալյանը և Հայկանուշ Մեսրոպյանը՝ Երևանի բարբառին նվիրված ուսումնասիրությունների շրջանակներում, և այս խոսվածքում Երևանի տարածքի մյուս խոսվածքներից

¹⁵ Ա. Այվազյան, *Նախիջևան. բնաշխարհիկ պատկերագարող հանրագիտակ*, Ե., 1995, էջ 178-179: Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, Հ. 4, Ե., 1998, էջ 32, 33:

¹⁶ Ա. Վարդանյան, Նորքի խոսվածքի և Նախիջևանի տարածքի որոշ խոսվածքների բառապաշարային ընդհանրությունները - «Հայերենագիտության արդի խնդիրներ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 92-98:

¹⁷ Ս. Օրբելյան, նշված աշխատանքը, էջ 404:

զգալիորեն տարբերվող հնչյունաբանական, քերականական որոշակի առանձնահատկություններ նկատել¹⁸, որոնք, ի դեպ, ակնհայտորեն համեմատելի են Նորսին մերձակա՝ վերոհիշյալ երկու գյուղերի խոսվածքների համապատասխան հատկանիշների հետ:

Այս համատեքստում պարզել ենք նաև այս երեք խոսվածքների բառապաշարային առնչությունները:

Բառային զուգաբանությունները առաջին իսկ հայացքից աչքի են ընկնում զարմանալի ընդհանրություններով: Դրանցում առկա են առավելապես բառապաշարի այնպիսի շերտեր, որոնք բնականության վայրը փոխելիս մարդիկ հեշտությամբ շարունակում են նոր բնակավայրի առօրյայում կիրառել՝ բնության և շրջապատող աշխարհի հետ կապված հասկացություններ, կենցաղին վերաբերող հասկացություններ, մարդու մարմնի մասերի հետ կապված հասկացություններ, սննդի հետ կապված հասկացություններ, հավատքի, ավանդույթների և սովորույթների հետ կապված հասկացություններ, առավել կիրառական բայեր և այլն:

Բառիմաստային զուգաբանություններում նույնպես առկա են բազմաթիվ բառեր, որոնք միանշանակորեն իմաստով համապատասխանում են բոլոր երեք խոսվածքներում:

Համեմատելով Նորքի, Մեծոփի և Ագնաբերդի խոսվածքների՝ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրում ընդգրկված 478 բառային զուգաբանություններ՝ պարզել ենք, որ դրանցից մոտ 400 միավորը ընդհանուր է: Սա վկայում է այն մասին, որ նորսեցի վերաբնակների սերունդները, ապրելով Նորքում, ավելի քան երեք դար պահպանել են հին խոսվածքի բառապաշարի զգալի մասը՝ մոտավոր հաշվարկով շուրջ ութսուն տոկոսը:

Համանման եզրակացության ենք հանգել, ծանոթանալով նույն տարածքի Ղարադուշ գյուղից և Ճահուկ ավանից 18-րդ դարերում Թուրքիայի Բոլու քաղաք տեղափոխված կաթոլիկ հայերի խոսվածքներին, որը ուսումնասիրել է ֆրանսահայ բարբառագետ Վարդուշկա Սամվելյանը¹⁹: 2001 թվականին Հայ բարբառագիտության միջազգային համագումարի առիթով Ստեփանակերտում հանդիպելով բարբառագետին՝ Թուրքիայի Բոլու և Զանգուլդակ քաղաքների տարեց հայ

¹⁸ Վ. Կատվայան, Երևանի խոսվածքի մասին - «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2018, էջ 124-135: Հ. Մեսրոպյան, Երևանի բարբառի ընդհանուր բնութագիրը - «Երևան» գիտական հոդվածների ժողովածու, 1-ին պրակ, Ե., 2006, էջ 122-130:

¹⁹ V. Samuelian, Le dialecte des Arméniens de Bolou (Turquie): Etat des recherches en cours - Հայ բարբառագիտության միջազգային համագումարի նյութեր, Ստեփանակերտ, 2001, էջ 2:

բնակիչներից նրա կողմից ձայնագրված բարբառային խոսքում կրկին բազմաթիվ հնչյունաբանական, բառապաշարային և ձևաբանական հատկանիշների ընդհանրություններ նկատեցինք Նախճավան և Ճահուկ գավառների տեղաբնիկ խոսվածքների հետ:

Այս փաստերը թույլ են տալիս ենթադրելու, որ անցյալում Վայոց ձորի միջբարբառը ընդգրկել է ոչ միայն Վայոց ձոր և Ճահուկ գավառները, այլև Նախճավան և Շարուր գավառների հյուսիսային հատվածները: Ի դեպ, այս ենթադրությունն ունի նաև պատմական հիմք, եթե հաշվի առնենք 12-15-րդ դարերում հզորացած Օրբելյանների Սյունաց իշխանության գոյության և նրա կենտրոնական գավառ Վայոց ձորի շուրջ մերձակա գավառների բնակչության լեզվական, մշակութային և տնտեսական համախմբման հանգամանքը²⁰:

Այս նկատառումով էլ նպատակահարմար գտանք նախկինում **Վայոց ձորի միջբարբառ** անվանված եզրույթը հետագայում վերանվանել **Ճահուկ-Վայքի միջբարբառ**:

Vardanyan Artak – Historical boundaries of the spread of the Jahuk-Vayk inter-dialect.— In our studies, the Vayots Dzor inter-dialect was called the common dialect of more than a dozen autochthonous villages of Vayots Dzor and northern Nakhichevan, which occupies an intermediate position between the Araratian and Jugha dialects of the northeastern dialect group of the eastern group of dialects of the Armenian language. However, some recent historical and linguistic facts indicate that the Vayots Dzor inter-dialect in the past had more extensive distribution borders (the villages Nors, Garagush, the borough Jahuk of Nakhijevan), therefore this inter-dialect was renamed the Jahuk-Vayk inter-dialect.

Варданын Артак – Исторические границы распространения Джаук-Вайкского междиалекта.— В наших исследованиях Вайоцдзорским междиалектом называли общий говор более десятка автохтонных сел Вайоц Дзора и северного Нахиджевана, который занимает промежуточное положение между араратским и джугинским диалектами северо-восточной диалектной группы восточной группировки диалектов армянского языка. Однако, некоторые новоявленные исторические и языковые факты свидетельствуют, что вайоцдзорский междиалект в прошлом имел более пространственные границы распространения (села Норс, Гарагуш, поселок Джаук Нахиджевана), следовательно этот междиалект был переименован в Джаук-Вайкский междиалект.

²⁰ Ս. Օրբելյան, նշված աշխատանքը: